

Հավություն չ'ն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

# ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՉԻՄՆԱԴՐԱՍԻՒ»

BAREGORTS, 2022, № 3 (55), ԵՐԵՎԱՆ

## ՄԵՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

### ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄՉՅԱՆԻ ՀԵՏ

Սփյուռքի ձևավորումից ի վեր հաճախ ենք խոսում Հայաստանի հայության և սփյուռքահայության միասնության մասին. երբեմն էլ ասում ենք՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդի հավաքականությունը նրա հարատևության հիմքն է: Հայաստանի ճակատ



տագրում սփյուռքը նույնքան վճռական դեր ունի, որքան սփյուռքի ճակատագրում Հայաստանը: Գուցե ոմանք վերապահումով կամ մասամբ ընդունեն այս բանաձևը, կամ ոմանք էլ բնավ չընդունեն, բայց որ սրանում կա ճշմարտության մեծ բաժին, անկասկած է:

Ճակատագիրը հաճախ, երբեմն էլ մեր իսկ ձեռքով է մեզ կանգնեցնում նորանոր բարդ խնդիրների առջև, որոնք Հայաստանի այսօրվա պայմաններում չեն կարող լուծում ստանալ առանց սփյուռքի հայկական կազմակերպությունների կամ առանձին ազգանվեր մեր հայրենակիցների միջամտության:

Մեր աչքի առաջ է քուվեյթաբնակ Կիրակոս Գույումջյանի պայծառ օրինակը, ազգանվեր ու հայրենասեր օրինակելի գործարար մի հայորդի, որի կյանքի գլխավոր խնդիրներից մեկը հայրենիքում ու մանավանդ Արցախում մնալուն մի բան ստեղծելն է (Քաշաթաղի շրջանի Ուռեկան գյուղի դպրոցի վերակառուցումն ու նորոգումը, ուսուցիչներին և աշակերտներին ամենամյա նվիրատվությունները և այլն), առհասարակ հայ երիտասարդության վերընթացին նպաստելը ժամանակակից աշխարհում:

Համավարակի և աղետալի պատերազմի հետեվանքով նվազել էր նաև Կ. Գույումջյանի Հայաստան այցելելու հաճախականությունը. վաղուց չէինք հանդիպել այդ պատկանելի հայորդուն:

Վերջին հանդիպումը նրա և Գուրգեն Մելիքյանի հետ կայացավ օգոստոսի 11-ին: Ասելու շահով էր կուտակվել: Նախ՝ հիմնադրամի գործադիր տնօրենը պրն. Գույումջյանին հանձնեց տարիներով նրա նվիրաբերած գումարների բանկային կտրոնները՝ հոգաբարձության խորհրդի շնորհակալությամբ և Արցախի ու Հայաստանի պատկերներով փայտե ձեռագործ լուսամփոփ – հուշանվերով հանդերձ, ապա կայացավ հետաքրքիր մտքերի փոխանակություն և այս հարցազրույցը, որը սիրով ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողներին:

**ՉՐՈՒՑԱՎԱՐ.**– *Պրն. Գույումջյան, որպես մեր հիմնադրամի հին և լավագույն բարեկամներից մեկը՝ Դուք միշտ եք մասնակցել վերջին տասնամյակների հաստատանյան գործընթացներին և բարեխղճորեն ու անվրեպ կատարել եք ազգանվեր հայի Ձեր պարտականությունները, և ահա տարիների ընդմիջումից հետո Դուք այսօր նորից Հայաստանում եք: Ասացե՛ք, խորհրդե՛մ, ի՞նչ փոփոխություններ եք նկատում մեր կյանքում և ինչպե՞ս եք գնահատում ներկա իրավիճակը:*

**ԳՈՒՅՈՒՄՉՅԱՆ.**– Խոստովանեմ՝ քաղաքականության հանդեպ թեև անտարբեր չեմ, բայց որքան էլ այն հետաքրքիր լինի հայության ճակատագրի տեսանկյունից, իմ ոլորտը չէ, դրանով չեմ զբաղվել. ես գործարար հայ մարդ եմ և Հայաստան եմ գալիս՝ հասկանալու, թե հայրենիքիս ու ժողովրդիս այս դժվար պահին ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:



*Հուշանվերի հանձնում*

**Չ.** – *Բոլորին հայտնի է Ձեր հայանպաստ գործունեությունը թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում: Ի՞նչ հետաքրքիր նյութություն ունեք սփյուռքից:*

**Գ.**– Թե՛ Քուվեյթի, թե՛ Դամասկոսի ու Հալեպի մեջ բարձր կարգերում սովորող հայ աշակերտության շրջանում վերջին տարիներին կազմակերպում ենք Ներսես Ծնորհալու անվան մրցանակաբաշխություն, որին մասնակցում են բացառապես հայ ծնողների՝ հայկական դպրոց հաճախած զավակները: Օտար դպրոց հաճախած կամ օտար դավանանքի հետևորդ հայ երեխան մրցանակ ստանալ չի կարող: Մրցանակը շրջանավարտին տալիս է թե՛ նյութական բարեկամություն, թե՛ տարատեսակ արտոնություններ: Օգնում է, որ բարձրագույնի ուսանողության առաջին տարում լուծի ուսման հետ կապված խնդիրները: Բոլորը ձգտում են սովորել բարձր նիշերով՝ այս մրցույթին մասնակցելու և հաղթելու համար, որովհետև, նյութականի հետ միասին, այն բարձր պահանջարկ ունեցող մասնագիտություններ, օրինակ՝ բժշկություն, ժամանակակից տեխնոլոգիաներ և այլն, ընտրելիս տալիս է նաև որոշակի արտունություններ: Մեծարժեք մրցանակը

մեկն է, հավակնորդները՝ շատ. նրան բոլոր սովորողներն են ձգտում, սակայն հաղթողը մեկն է լինում: Մրցանակը հաղթողին հանդիսավոր պայմաններում հանձնում է հոգևոր սրբազան առաջնորդը: Արարողությանը ներկա են լինում բոլոր դպրոցների տնօրենները, Ազգային ժողովների հայ պատգամավորները:

Քուվեյթում այս ծրագիրը գործում է յոթ տարի, իսկ Սիրիայում՝ Դամասկոսում, Հալեպում արդեն չորրորդ տարին է: Դպրոցների տնօրենները հավաստում են, որ ծրագիրը մեծ խթան է ընդհանուր ուսման առաջադիմության համար և բարձրացրել է հայ դպրոցի հեղինակությունը օտարալեզու դպրոցների շրջանում:

Ի՞նչ սկզբունքով պետք է տրվի մրցանակը և ո՞ւմ: Մեզ մոտ սա բարդ խնդիր է, որը լուծվում է հատուկ խիստ ու անկողմնակալ կանոնադրությամբ: Միջին բարձրագույն նիշ ունենալը պարտադիր է, սակայն երկու ծնողներն էլ պարտադիր հայ պիտի լինեն, հավակնորդը հայ եկեղեցում մկրտված լինելու վկայական պիտի ունենա, քրիստոնեական դավանանք ունեցող մյուս երեխաներին՝ մարոնի և այլն, կամ տարագրի ծնողների երեխաներին մրցանակ չի տրվում:

**Չ.**– *Հայրենիքում ինչ է Ձեր անելիքը, հիմա ի՞նչ նպատակով եք այստեղ:*

**Գ.**– Մենք ուրիշ ակնկալիքներ ունեինք, հիմա ուրիշ վիճակի մեջ ենք հայտնված: Անշուշտ ծանր է այս վիճակը ամեն տեսակետից: Աղքատիկ Հայաստանը իր սակավ միջոցներով որևէ խնդիր չի կարող լուծել, եթե սփյուռքահայությունը չօգնի: Դեռ 44-օրյա պատերազմի կեսերին ես կոչով դիմեցի հայությանը, որ թշնամին գործածում է ժամանակակից բարձր ճշգրտության զենքեր: Նրան դիմակայել կարող ենք նույնպիսի գերճշգրիտ զենքերով, ուստի մեր հանգանակած գումարը քիչ է: Պարտությունից հետո ստեղծված է իրոք անմխիթար վիճակ, որը նույնպես կարող է բարելավվել սփյուռքահայերի միջոցներով: Հայաստանը ներկա պահին չունի բոլոր գոհվածների ընտանիքներին, տեղահանված անտուններին տնավորելու և նրանց նյութական ու բարոյական վնասները հատուցելու հնարավորություն: Հայաստանի մեջ նրանց տեղավորելը հարցի լուծում չէ. նրանք պետք է վերադառնան Արցախ, և մենք պիտի կարողանանք նրանց այնտեղ տնավորելն ապահովել: Ա՛յս է այժմ Հայաստան գալուս նպատակը, որ պիտի լինի նաև սփյուռքահայ բոլոր գործարարների նպատակը:

**Չ.**– *Պրն. Գույումջյան, շնորհակալություն հարցազրույցի համար և հաջողություն Ձեր հայրենանվեր գործում:*

Չրուցավար՝ Ս. ՄՈՒՐԱԳՅԱՆ

## ՆԻԿ ԱԳՈՒՅԱՆ

Արցախ մեր վերջին ուղևորության նպատակներից մեկն էլ Նիկ Ագուլյանին հանդիպելն էր: Հայերեն դժվար խոսող, բայց ըստ էության ամեն ինչ հասկացող սփյուռքահայ բացառիկ բժիշկներից մեկն է նա, ով իր կյանքի նպատակ է դարձրել պատերազմում վիրավորված կամ հաշմված իր ազգակիցներին հենց Արցախում մարդկայնորեն ու մասնագիտորեն օգնելը: Ահա ինչու է նա պարբերաբար հայտնվում Արցախում, ուր վայելում է հայրենակիցների անկեղծ սերն ու հարգանքը:

Այս պատվիրանը նա ժառանգել է ավագներից՝ առաջին բարերարներ Ջորջ և Քերոլան Նաջարյաններից, որոնք, ի շարս այլ բարեգործությունների, Ստեփանակերտում հիմնել են նաև «Արփեն» մայր և նորածին կենտրոնը: Պատահական չէր նաև մեր այցելությունն այդ կենտրոն, ուր Ն. Ագուլյանը հանգամանորեն ծանոթացավ ծննդաբեր մայրերին օգնություն ցուցաբերվող ծրագրերին:



Նիկ Ագուլյանը՝ ձախից, Գ. Մելիքյանի և Ս. Գալադյանի հետ «Արփեն» կենտրոնում

Նիկ Ագուլյանը ծնվել է ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգի Ռասին քաղաքում և 1990 թ. ավարտել է Վիսկոնսինի բժշկական համալսարանը՝ մասնագիտացել է ընտանեկան բժշկության մեջ: 25 տարի զբաղվել է ընտանեկան բժշկությամբ, Բելգում եղել է բժշկական կլինիկայի տնօրեն: 2001-02 թթ. բնակվել և աշխատել է Հայաստանում՝ Համաշխարհային բանկի և ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում, որոնք ներառում են առաջնային բուժօգնության բարեփոխումները:

Հենց այս ընթացքում էլ Գուրգեն Մելիքյանի կողմից նախաձեռնված ճամփորդությամբ առաջին անգամ կարճ ժամանակով մեկնել է Արցախ: 1992 թ. երեք ամիս անցկացրել է Հայաստանում՝ մարդասի-

րական օգնություն տրամադրելով պատերազմից տեղահանվածներին::

Այս ճամփորդությունը Արցախ իրականացվում է Թուֆենկյան հիմնադրամի և Ամերիկահայ բժշկական ասոցիացիայի հովանավորությամբ: Այն աջակցում է Առողջապահության նախարարությանը՝ զարգացնելու և ընդլայնելու իրենց առաջնային բուժօգնության մատուցումը Մարտունիում:

Բժիշկ Անուշ Սահակյանը և ս մեծ դեր ունեցավ ծրագրի մեկնարկի գործում: Ե՛վ բժիշկ Անուշը, և՛ Նիկը, պարբերաբար կվերադառնան Արցախ՝ ծրագիրը շարունակելու համար:

## ՀԱԿՈՐ ԺԱԿ ԱԼԹԻԲԱՐՄԱՔՅԱՆ

1937 - 2022

Մեր հիմնադրամի ազնիվ բարերարների շարքերից, ցավոք, լինում են նաև անցանկալի կորուստներ: Վերջերս՝ հուլիսի 13-ին, Փրանսիայի Նիցա քաղաքում կյանքին հրաժեշտ է տվել մեր գործի նվիրյալներից մեկը՝ Հակոբ Ժակ Ալթիբարմաքյանը:

Նա ծնվել է 22.11.1937 թ. Պոլսում: Սովորել և ավարտել է Պոլսո Մխիթարյան վարժարանը: Այնուհետև ուսումը շարունակել է Անգլիայում, ձեռք բերել կաշեգործի մասնագիտություն: Նրա հայրը՝ Վահե Ալթիբարմաքյանը, նույնպես կաշեգործ էր, և որդին, Լոնդոնից վերադառնալով Պոլիս, շարունակեց հոր գործը:

1980-ականներին Հ. Ալթիբարմաքյանն ընտանիքով տեղափոխվեց Փրանսիա՝ Նիցա, ուր կաշեգործական արհեստանոց հիմնեց և դարձավ բավականին հաջողակ գործարար:

2001- ից Հ. Ալթիբարմաքյանը իր ազնվագույն և բարեհամբույր տիկնոջ հետ հաճախակի էր այցելում Արցախ և շրայլորեն հիմնադրամին ցուցաբերում իր նվիրատվությունը:

2009-ին էր, երբ Արցախ ուղևորվեցինք Հակոբ Ալթիբարմաքյանի և նրա տիկնոջ հետ: Այցելեցինք Ծիծեռնավանքի 4-րդ դարի Ս. Գևորգ բազիլիկ եկեղեցին, որ աղբյուրական տիրապետության շրջանում վերածվել էր քրդական անասնագոմի և ավերվել ըստ ամենայնի: Ազատագրումից հետո Ծիծեռնավանքը վերանորոգվեց հիմնականում Քերոլան և Ջորջ Նաջարյանների, ինչպես նաև Հակով և Մարի Ալթիբարմաքյանի միջոցներով, և 2003 թ.-ին ծիսական արարողությամբ կատարվեց



Հակոբ Ալթիբարմաքյանը (մեջտեղում) 2009 Արցախում՝ Մոնթեի հուշաքարի մոտ

նրա հանդիսավոր բացումը: Ներկայումս Ադրբեջանին հանձնված եկեղեցին մինչև վերջին պատերազմն ուներ կանոնավոր հոգևոր սպասավորություն:

Ծիծեռնավանքի Սբ. Գևորգ եկեղեցու տիրացուի՝ գետի ափի տուն հրավիրվեցինք, ուր տիկինը, իմանալով, որ տանտիրուհին շուտով ութերորդ երեխան

է ծննդաբերելու, նրան նվիրեց իր դրամապանակի ամբողջ պարունակությունը:

Հետաքրքիր գրուցակից էր Հակոբը. ամբողջ ճամփորդության ընթացքում նա խոսում էր հայոց պատմությունից ու մշակույթից, հետաքրքրվում հայաստանյան ու արցախյան վերջին իրադարձություններով և իր համար ճշտումներ անում: Նրա համոզմամբ հայրենիքի մեջ ամրանալն ու հայրենի պետականությունը հզորացնելն է մեր ճիշտ ճանապարհը: «Պետք է զորացնել հայոց պահանջատիրությունը,– ասում էր նա,– գոնե այնքան, որ հասնենք Արցախի խնդրի արդարացի լուծման՝ որպես փոխհատուցում հայոց անցյալի ողբերգական կորուստների և մեր ժողովրդի կրած չարչարանքների: Հայր միայն հայրենիքի մեջ կրնա լիարժեք երջանկություն ունենալ»: Սակայն նրա երջանկությունն էլ լիարժեք չեղավ. կնքեց մահկանացուն և հավիտյան մնաց օտարության մեջ:

Ցավակցություն՝ն Հակոբ Ալթիբարմաքյանի ազնվափայլ տիկնոջն ու հարազատներին, և հարգանք նրա լուսավոր հիշատակին:

**ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ ԲԵՐՁՈՐԻՆ, ԱՅԳԻՆԵՐԻՆ ՈՒ ՊՈՒՐԱԿՆԵՐԻՆ, ԼԱԳՆԻ ՄԻՋԱՆՅՔԻՆ**

Մինչև 2020 թ. սեպտեմբերը Հայաստանում և սփյուռքում որևէ մեկի մտքով անգամ չէր անցնի, թե մեր քաջամարտիկների սխրանքների և թափած արյան գնով ազատագրված Բերձորը, Աղավնոն և Մուսը Լաչինի միջանցքով հանդերձ առանց կրակոցի նորից կհանձնվեն թշնամուն: Վատահ էինք, որ հնուց անտի այս տարածքը այսուհետև «հավիտյանս հավիտենից» մերն է, և այստեղ հիմնադրամի նախաձեռնությամբ ու ԵՊՀ ուսանողների մասնակցությամբ նախորդ տասնամյակներում ամեն տարի գարնանը և աշնանը իրականացվեցին ավելի քան տասը հազար ընկուզենիների և այլ պտղատու և դեկորատիվ ծառերի տնկման աշխատանքներ:

Երբ սկսեց գործել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամբ», ազատագրված հայրենի տարածքները շենացնելու նպատակով ԵՊՀ ուսանողները Գուրգեն Մելիքյանի առաջնորդությամբ և հաճախ էլ ԵՊՀ ռեկտորի ու ռեկտորատի և դասախոսների մասնակցությամբ ամեն տարի գարնանը և աշնանը ծառատունկ էին իրականացնում Բերձոր մտնող մայրուղու երկու կողմերում: Ստեղծված շուրջ քսան այգիներում, պուրակներում տնկվել ու խնամվել էր շուրջ 10 000



Չրաժեշտ՝ զավակի պես աճեցրած, խնամած ու փայփայած ընկուզենուն

ծառ՝ ընկուզենի, սոսենի, թթենի և այլն, որոնք վաղուց արդեն բերքատու էին: Ո՛վ կայացրեց այս դիվական վճիռը, ո՛վ է քաղաքական այս կորստաբեր խաղերի ստոր հեղինակը... Ճակատագրի դառը հեգնանքով օգոստոսի 25-ին թշնամուն հանձնվեցին

«Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի, Լեոնիդ Ազգալոյանի, Դուշման Վարդանի, լեդի Քերոլայն Քոքսի, Սերժ Փափայանցի, Ստ. Ալաջաջյանի, ԵՊՀ 90 և 100-ամյակների, Հայաստանի անկախության 25-ամյակի և մյուս պուրակներն ու այգիները; Օգոստոսի 18-ին Ստեփանակերտից վերադառնալիս վերջին անգամ անցնում էինք մեր այնքան խնամած ու փայփայած այգիների մոտով: Այլևս այդ ճանապարհով չէինք անցնելու: Բայց արդյո՞ք... Գուրգեն Մելիքյանի հետ ցավով վերհիշում էինք, թե ի՞նչ ոգևորությամբ էինք ժամանակին տնկում հազարավոր այս ծառերն ու ստեղծում տասնյակ այգիները և հիմա ի՞նչ դառնությամբ ու կսկիծով էինք դրանք թողնում թշնամուն:



Այստեղ՝ պուրակի մուտքին էր ՀՀ Ազգային հերոս Մոնթեի հուշաբարը

Հատկապես ծանր էր այս ամենը նախաձեռնող, իրականացնող ու հսկող Գուրգեն Մելիքյանի հոգեվիճակը: Հրաժեշտ տալ գավակի պես անեցրած ծառերին ու այգիներին....

Կանգնեցինք Բերձորի քանդվող հյուրատան առջև: Քանի՞ անգամ էինք գիշերել այնտեղ և ի՞նչ միջոցառումներ անցկացրել Հայաստանի և Արցախի, ԵՊՀ ղեկավարության և ծառատունկի մասնակից ուսանողների հետ: Հիմա տեսանք՝ մեր ձեռքով կառուցած հյուրատան դռներն ու պատուհաններն էին մեր տղաները քանդում՝ անկուշտ ու տմարդի թշնամու վայելքը լիարժեք չդարձնելու համար:

Վերջին անգամ այցելեցինք Սբ. Համբարձման եկեղեցի, որը կառուցվել է 1996 թ. Բերձորն ազատագրելուց և արցախյան առաջին պատերազմում մեր հաղթանակից անմիջապես հետո՝ նախագծի հեղինակ և ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի և քանդակագործ Արտաշես Հովսեփյանի մասնակցությամբ: Պղծությունից փրկելու համար



Սբ. Համբարձման պատից հեռացվում են բրիտտոնեական սրբությունները

արդեն հանված են նրանց հրաշակերտած բարավորը: Մենք ականատես եղանք «Թաղեցեալ լինիմք եւ ոչ խոնարհիմք» խոսուն վիմագիրը, խաչերն ու մյուս սրբությունները հեռացնելու տխուր գործողությանը: Ցավ ի սիրտ հեռացանք եկեղեցուց, ուր քանիցս ներկա ենք եղել պատարագի և այլ ծիսակարգերի, լսել մեր հոգևոր գմայելի երգերը:

Հրաժեշտ ենք տալիս Սբ. Համբարձման եկեղեցուն, որն ազերիները դարձնելու են մուսուլմանական աղոթատուն, և արդեն համացանցում դրված է ապագա մզկիթի պատկերը:

Ամեն այգու, ծառի ու նորատունկի մոտ կանգնելիս վերհիշում էինք նախկին ոգևորությունն ու հրճվանքը, որ այժմ փոխարկվել էին կորստի դառնակսկիծ ցավի ու վիրավորանքի:

Պտղաբերձ ընկուզենիներն ու մյուս ծառերը կանգուն էին, բայց արդեն հանվել ու տեղափոխվել էին հուշաբարերը՝ իրենց տեղում թողնելով դատարկ փոսեր ու խոռոչներ: Տխուր խոհերով հրաժեշտ էինք տալիս նրանց այն հարազատի պես, որին գուցե չենք հանդիպելու:

Եղել են ժամանակներ, երբ մեր ժողովուրդն ընթացել է հաղթանակից հաղթանակ: Ցավոք, վերջին շրջանում գնում ենք պարտությունից պարտություն ու նահանջից նահանջ՝ հայրենի տարածքներից, պատմամշակութային, հոգեմտավոր ու բարոյական արժեքներից:

Արդյոք նորից գալո՞ւ է հաղթանակների ժամանակը. վստահ լինենք՝ անպայման գալու է:

**2022 թ. օգոստոսից ցայսօր ստացված օգնություններ**

№	Ամսաթիվ	Անուն, Ազգանուն	Նպատակ	ՀՀ դրամ	Արտարժույթ
1	22-08-22	Վահե և Քրիստին Ավագյաններ	Օգնություն	400000	
2	24-08-22	Սարգիս և Աիդա Բաղայաններ	Օգնություն	161600	400 USD
3	09-09-22	Լիլիթ և Արմնոյ Վարդանյաններ	Օգնություն	606000	1500 USD
4	14-09-22	Սիրամարգ Պարզյան	Օգնություն	10000	
5	26-09-22	Բաֆֆի Պալյան	Խ. Պալյանի և Լ. Չաքարյանի անվան կրթաթոշակ	211000	500 USD
6	29-09-22	Հակոբ և Անահիտ Գյուլեջյաններ	Օգնություն	206750	500 USD
7	03-10-22	Արմտերս ՍՊԸ	Օգնություն	250000	
8	04-10-22	Սիլվա Նենեջյան	Օգնություն Հին Շենի ազատամարտիկ Սասուն Ալեքսանյանին	58380	140 USD
9	06-10-22	Թերեզա Ալաջաջյան	Ստ.Ալաջաջյանի գրքի շնորհանդեսի համար	405000	1000 USD
10	20-10-22	Թերեզյան կենտրոն	Օգնություն՝ Հին Շենի, Մեծ Շենի, Լիսագորի, Եղցահողի, Դահրավի դպրոցների ուսուցիչներին և աշխատողներին	3615799	8950 USD
11	24-10-22	Anonymous	Օգնություն	8520139	19980 USD
12	26-10-22	Սիրամարգ Պարզյան	Օգնություն	10000	
13	26-10-22	Արմեն Դարբինյան	Օգնություն Գրքերի ծրագիր	500000	
14	27-10-22	Արտո Պերճ Մանուկյան	Օգնություն	20000	
15	27-10-22	Կատյա Կուշերյան	Օգնություն	117300	300 USD
16	27-10-22	Ռաֆիկ և Հասմիկ Բորոյաններ	ԽԵԱ ծրագիր	312800	800 USD
17	08-11-22	Արբի, Արին, Լինա Նազարյաններ	Օգնություն	117750	300 USD
18	08-11-22	Փյոռա Սարյան	Օգնություն	157000	400 USD
19	08-11-22	Ռուբինա, Արտուշ, Արմնոյ, Արփին Թորոսյաններ	Օգնություն	39250	100 USD
		<b>Ընդամենը՝</b>		<b>15,718,768.00</b>	

**2022թ. առաջին կիսամյակի փոխանցված ուսման վարձեր**

№	Ամսաթիվ	ԲՈՒՀ	Նպատակ	ՀՀ դրամ
1	07-10-22	Ա. Բարաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լ. Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Մարտիրոսյան Անահիտ	10000
2	07-10-22	Ա. Բարաջանյանի անվ երաժշ. քոլեջ	Լ. Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Անդրեասյան Ալբերտ	10000
3	07-10-22	Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. քոլեջ	Լ. Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Մանուկյան Ալիսա	10000
4	07-10-22	Կոմիտասի անվ.պետ. կոնսերվատորիա	Լ. Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Սիմոնյան Լիանա	10000
5	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Խ. Պալյանի անվ. կրթաթոշակ, Հայրապետյան Անգելինա, հայ բանասիր 3-րդ կուրս	20000

6	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Սո.Այաջաջյանի անվ. կրթաթոշակ, Միրաքյան Էլեն, հայ բանասիր. 4-րդ կուրս	30000
7	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Նազելի և Դավիթ Չարյանի անվ. կրթաթոշակ, Գասպարյան Աննա, Ֆարմացիա, 4-րդ կուրս	30000
8	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Սվետլանա, ԵԼՀ անգլ. իսպ և հաղորդ 4-րդ կուրս	50000
9	07-10-22	Բրյուսովի անվան համալսարան	Հակոբյան Արաքսյա, միջմշակ. 3-րդ կուրս	50000
10	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Թադևոսյան Էլենա, Միջազգ. Հարաբ. 1-ին կուրս	50000
11	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Ավետիսյան Տարոն, սերվիս մագիստր 2-րդ կուրս	50000
12	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Վարդանյան Նաթելյա, կովկասագիտ. մագիստր 1-ին կուրս	50000
13	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Հովհաննիսյան Տիգրան, իրանապատմաբան. 1-ին կուրս	50000
14	07-10-22	Բրյուսովի անվան համալսարան	Մկոյան Չինա, միջմշակ. Հաղորդ. 4-րդ կուրս	50000
15	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Ալանյան Հայկուշ, թարգմանչ. 2-րդ կուրս	50000
16	07-10-22	Բրյուսովի անվան համալսարան	Քոչյան Արմինե, թարգմանչ. 4-րդ կուրս	50000
17	07-10-22	ՀՊՄՀ հիմնադրամ	Վարդանյան Սիրանուշ, սոց. մանկավարժ. 2-րդ կուրս	50000
18	07-10-22	Բրյուսովի անվան համալսարան	Մարաբյան Մարգարիտ, թարգմանչ. 3-րդ կուրս	50000
19	07-10-22	ՀՊՏՀ հիմնադրամ	Կոստանյան Մարինա, ֆինանսներ 4-րդ կուրս	50000
20	07-10-22	Վանաձորի պետ. համալսարան	Նալբանդյան Մելինե, կառավարում 3-րդ կուրս	50000
21	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Բադալյան Լիլիթ, միջազգ. հարաբ. 1-ին կուրս	50000
22	07-10-22	ԱԻՆ Ճգնաժամ կառ. պետ. Ակադեմիա	Գրիգորյան Համիկ, ճգնաժամ. Կառավար. 5-րդ կուրս, հեռակա	50000
23	07-10-22	Կոմիտասի անվ. կոնսերվատորիա	Ալիսանյան Դավիթ, ժողգործիքներ, 3-րդ կուրս	50000
24	07-10-22	ԵՊԲՀ հիմնադրամ	Սողոմոնյան Մարիամ, բնդի. բժշկություն 4-րդ կուրս	50000
25	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Սողոմոնյան Անահիտ, ԵԼՀ 3-րդ կուրս	50000
26	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Ղարաբյոզյան Լիլիթ, թյուրք. 3-րդ կուրս /բացառություն/	75000
27	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Հողմրցյան Էդգար, կիրառ վիճ և տվյալ գիտ 1-ին կուրս /բացառություն/	80000
28	07-10-22	ԱՌԻԱՀ Երևանի ԿԳԻ	Ղևոնդյան Անահիտ, բանկ գուրժ և ապահովագր. 2-րդ կուրս /բացառություն/	80000
29	07-10-22	ՀԱԱՀ հիմնադրամ	Ալեքսանյան Ռազմիկ, ազրար ճարտարագիտ. 4-րդ կուրս /բացառություն/	80000
30	07-10-22	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Միմոնյան Հայկ, ճարտարապ 1-ին կուրս, 621, խ 5 /բացառություն/	80000
31	07-10-22	ՀԱՊՀ հիմնադրամ	Մանուկյան Գեղամ, ՀԱՊՀ, ԷԷԻ, Էլեկտրատեխ. 2-րդ կուրս, 108 խումբ	80000
32	07-10-22	ՀԱԱՀ Վանաձորի մ/ն	Լալազարյան Էրիկ, մեքենա սարք. 5-րդ կուրս	80000
33	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Բարսամյան Հովհաննես, քաղաքագիտ. 2-րդ կուրս	80000

34	07-10-22	Կոմիտասի անվ.պետ. կոնսերվատորիա	Շախկյան Մանվել, ժողգործիքներ, 2-րդ կուրս	80000
35	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Ավետիսյան Լալա, թյուրք. 4-րդ կուրս /բացառություն/	80000
36	07-10-22	ԵՊԲՀ հիմնադրամ	Ղազարյան Մոնիկա, ատամնաբուժ. 5-րդ կուրս /բացառություն/	80000
37	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Հասմիկ, հայ բանասիր. 4-րդ կուրս /բացառություն/	80000
38	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Անտոնյան Արգինե, փիլիսոփայ. 2-րդ կուրս /բացառություն/	80000
39	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Ղալաչյան Արթուր, թյուրք. 3-րդ կուրս	100000
40	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Եղիազարյան Սամվել, հայ միջնադար և նոր գրակ, հայցորդ	100000
41	07-10-22	ԵՊԲՀ հիմնադրամ	Թանգամյան Շանթ, ընդհ. բժշկություն 2-րդ կուրս, խ 235, հոսք 4	100000
42	07-10-22	ԵՊԲՀ հիմնադրամ	Ղարազյոզյան Տաթևիկ, ընդհ բժշկություն 2-րդ կուրս /բացառություն/	100000
43	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Դավիթ, իրանագիտ. 2-րդ կուրս	100000
44	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Եղիազարյան Սամվել, գործարար վարչարար, մագիստր 3-րդ կուրս /բացառություն/	100000
45	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Օհանյան Նարեկ, թյուրք. 3-րդ կուրս	100000
46	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Յավրումյան Մարիամ, սոց.աշխատանք 1-ին կուրս /բացառություն/	100000
47	07-10-22	ԵՊԲՀ հիմնադրամ	Շարոյան Թինա, բուժական գործ 1-ին կուրս /բացառություն/	100000
48	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Ազոյան Տիգրան, մեխանթ մագիստր 1-ին կուրս	100000
49	07-10-22	ՀՀ Ամերիկյան համալսարան	Ավետիսյան Սոնա, անգլ և հաղորդ 4-րդ կուրս /բացառություն/	100000
50	07-10-22	ՄՊՀ Երևանի մ/ն	Թորգոմյան Ժիրայր, միջազգ հարաբ. մագիստր 2-րդ կուրս	100000
51	07-10-22	ԵՊՀ հիմնադրամ	Հովհաննիսյան Սևակ, աշխարհ և երկրաբ. 3-րդ կուրս /բացառություն/	150000
52	07-10-22	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ոսկանյան Լուսինե, դիզայն 3-րդ կուրս /բացառություն/	150000
53	07-10-22	ՀՀ Ամերիկյան համալսարան	Սարգսյան Իոննիս-Սարանդոս, անգլ և հաղորդ. 4-րդ կուրս	150000
54	11-10-22	ՀՀ բժշկական ինստիտուտ ԱԿ	Աջամօղյան Հայկազ, ստոմատոլոգիա, 2-րդ կուրս	50000
55	11-10-22	ՀՀ բժշկական ինստիտուտ ԱԿ	Իսախատուրյան Գրիգոր, ստոմատոլոգիա, 3-րդ կուրս	50000
56	11-10-22	ՀՀ բժշկական ինստիտուտ ԱԿ	Կոբեյան Միքայել, ստոմատոլոգիա, 4-րդ կուրս	50000
57	11-10-22	Ա. Բարաջանյանի անվ երաժշ. Բոլեջ	Թևոսյան Գևորգ, ժողգործիքներ 3-րդ կուրս	50000
58	15-10-22	ՀԱԱՀ հիմնադրամ	Մարկոսյան Հակոբ, ագրոէկոնոմ 5-րդ կուրս	50000
59	15-10-22	ՀԱԱՀ հիմնադրամ	Սարգսյան Իշխան, ագրոէկոնոմիկա 5-րդ կուրս	50000

**Ընդամենը**

**4005000**



## ՀԱՄՇԵՆԻ ԱՐԱՇԵՏՆԵՐՈՎ՝ ՄԻՆՉԵՎ ԱՄՆ-Ի ՄՈՆԹԵԲԵԼՈ

2020, 2021 թթ. գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով գործուղման էի Լոս Անջելես: Մեծ անակնկալ էր, երբ իմացա, որ դեռևս 1940-1950-ական թթ. Կալիֆոռնիայի Մոնթեբելո քաղաքում հաստատվել են նաև համշենահայ ընտանիքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նախնիների պատմությունն ու կյանքի ողիսականը: Եվ ահա խմբագիր և հրատարակախոս, հարգարժան Վաչե Բրուտյանի միջոցով ինձ բախտ վիճակվեց Մոնթեբելոյում ծանոթանալ մեծ հայ և հայրենասեր Վարդան Ֆրնդրքյանի և նրա հրաշալի ընտանիքի՝ եգիպտահայ տիկնոջ՝ Սոնայի, դուստրեր Ալիսի և Կատարինի, որդու՝ Արամի, փեսայի՝ Վիգեն Ամմահունու հետ: Այս



Լ. Սահակյանը՝ Վ. Ֆրնդրքյանի հետ

հանդիպումներին գնում էի մեծ ոգևորությամբ, սրտի թրթիռով, վստահ լինելով, որ բացահայտելու եմ նոր փաստեր, որոնք լրացնելու են Համշեն աշխարհի պատմության էջերը:

Ներս մտանք Ֆրնդրքյանների՝ Մոնթեբելոյի առանձնատունը, ուր տեսա լուսավոր մարդկանց: Անբացատրելի պատկառանքի զգացում ապրեցի, երբ մոտեցա բարևելու 92-ամյա հավատավոր դաշնակցական և ազգային գործիչ, մասնագիտու-

թյամբ տիեզերանավերի ինժեներ Վարդան Ֆրնդրքյանին: Սպասվածից էլ ավելի մեծ էր անակնկալը, երբ նա ներկայացրեց իր նախնիների պատմությունը:

Պրն. Վարդանի հայրը՝ Ներսեսը, ծնունդով Տրապիզոնի Գրոբի գյուղից էր: Հայերենի փայլուն գիտակ լինելով՝ Տրապիզոնի դպրոցներում նա եղել է թուրքերենի ուսուցիչ: Հայոց ցեղասպանության տարիներին կորցնելով մորը, կնոջն ու երկու աղջիկներին՝ Ներսեսը 1921-1922 թթ. գալիս է Հայաստան, ապա հաստատվելով Ղրիմի Նովայա Բուրուլչա (Новая Бурульча) գյուղում՝ այնտեղ կազմում է նոր ընտանիք:

Օնվում են Ներսեսի դուստրերը՝ Անահիտն ու Արաքսին, և 1930 թ.՝ որդին՝ Վարդանը:

Պրն. Վարդանը հուզմունքով էր հիշում իր հոր պատմությունը. 1937 թ. Ներսեսն ու իր եղբայրը ենթարկվում են քաղաքական հետապնդումների: Հայկը սպանվում է, իսկ Ներսեսը կարողանում է մի կերպ ազատվել: Երբ պրն. Վարդանի կինը՝ Սոնան, ինձ ցույց տվեց Ներսես Ֆրնդրքյանի խնամքով հավաքված արխիվը, մեծ հուզմունք ու զարմանք ապրեցի. իր բացառիկ հողվածաշարերից մեկում՝ նվիրված Տրապիզոնի և շրջակա հայ գյուղերի պատմությանը, կենցաղին, ավանդություններին: Ներսես Ֆրնդրքյանը գրել է նաև, որ իր նախնիները Տրապիզոն են գաղթել Համշենից:

Ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, 17-18-րդ դարերում բռնի իսլամացման հետևանքով Համշենի գավառի հայության մի մասը բռնում է գաղթի ճամփան և Տրապիզոնի նահանգի լեռնային հատվածներում ու զոգահովիտներում հիմնում գյուղեր: Ահա այսպես էլ հիմնվում է համշենահայերի Գրոբի գյուղը, որտեղ և ծնվել է Ներսես Ֆրնդրքյանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1942 թ., Ֆրնդրքյանները Ղրիմից և շրջակա վայրերից (Կրասնոդարի երկրամաս) շատ հայ ընտանիքների հետ տարագրվում են բռնի բանվորական աշխատանքի: Հետագայում հաստատվում են Ֆրանսիայում: Մի քանի ամիս նրանք ապրում են գյուղերում, ապա՝ Ռոդվայի շրջանում աշխատում են գործարանում:

Պատերազմի ավարտից հետո տարագրյալ այս հայերը չեն վերադառնում Խորհրդային Միության, քանի որ վախենում էին, թե ժամանակի խորհրդային իշխանությունները կսպանեն կամ Սիբիր կաքսորեն իրենց: Որոշ ժամանակ անց շատերի նման Ֆրնդըքյանները փախչում են Գերմանիա՝ ամերիկյան գոտի, որտեղ ավելի ապահով էր այդ ժամանակ: Հաստատվում են Գերմանիայում՝ գաղթական հայերի համար առանձնացված Շտուտգարդ քաղաքի մոտ գտնվող Ֆունկերկազերն կոչվող գորամասի հատուկ ճամբարում և քաղաքի արվարձաններում՝ իրենց միջոցներով վարձակալած բնակարաններում: Այնտեղ են մնում 1945 -ից մինչև 1949 թ.:

Վ. Ֆրնդըքյանը մեզ մանրամասն պատմեց Շտուտգարդում հայ տարագիրների ու նաև իր ընտանիքի ճամբարային կյանքը: 1949 թ. շատերի հետ «Տեղահանված անձինք» (“Displaced Persons”) կարգավիճակով ԱՄՆ է տեղափոխվում նաև Ֆրնդըքյանների ընտանիքը: Հաստատվելով ԱՄՆ-ի Մոնթբելո քաղաքում՝ Վ. Ֆրնդըքյանը մասնագիտանում է տիեզերանավերի ինժեներության բնագավառում: Մասնագիտությամբ աշխատելուն զուգահեռ՝ նա շարունակում է իր հոր՝ Ներսեսի հայապահպան գործը:

Վարդան Ֆրնդըքյանը մեծ ավանդ ու ներդրում ունի հայ համայնքի կյանքում: Նա իր մասնակցությունն է բերել Մոնթբելոյի հայկական դպրոցի և եկեղեցու հիմնման, տեղի ակումբային կյանքում, նաև Արևմտյան Ամերիկայի «Հայ երիտասարդաց դաշնակցության ճամբարը» կազմակերպելու գործում: Վ. Ֆրնդըքյանի, իր ընկերոջ Մխոյի (Մխիթար Մինասյան) և Հակոբ Մանի-ջանյանի գաղափարն է եղել հայաշատ Մոնթբելո քաղաքում կառուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողը: Դաշնակցության կոմիտեի և այլ ընկեր-

ների աջակցությամբ նրանք քաղաքապետարանից ձեռք են բերում թույլտվություն ու տարածք, և հուշարձան-կոթողը վեր է խոյանում:



*Ֆրնդըքյանների ընտանիքում*

Վարդան Ֆրնդըքյանը նաև բազմաթիվ բարեգործություններով աջակցել և առ այսօր շարունակում է իր ներդրումն ունենալ Հայաստանում ու Արցախում իրականացվող բազմաթիվ բարեգործական ծրագրերում: Նա նաև «Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հավատարիմ բարեկամն է:

Հեռավոր ավերից անգամ ծագումով համշենցի հայրենասեր մեծ հայր շարունակում է իր ձեռքը պահել Հայաստանի և Արցախի զարկերակին ու անմիջապես արձագանքել հայոց սրտի բաբախումներին:

Նրա բացառիկ կերպարը մեծ նվիրման օրինակ է ողջ համահայկական աշխարհի համար:

ԼՈՒՄԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

*Հ.Գ. Հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը լավագույն մաղթանքներն է հղում իր լավ բարեկամ, օրինակելի հայրորդի Վարդան Ֆրնդըքյանին ու նրա ընտանիքին:*

## ԲԵՐՉՈՐՑԻ ՊՍՏԱՆՈՒ՝ ՄԵՆՈՒԱ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

2022 թ. օգոստոսին ՀՀ մշակութային մարտադարձում կայացավ հեղինակավոր «Գյումրի OPEN» միջազգային շախմատային մրցաշարը: Բավական պատկառելի ու ներկայացուցչական այդ մրցապայքարին Արցախից մասնակցում էր նաև 14 տարեկան Մենուա Հակոբյանը: Գանգրահեր ու մըշտաժպիտ այդ պատանին, որ ծնվել է այս օգոստոսի վերջին հայաթափված ու հայերից խլված

Քաջաթաղի շրջանի վարչական կենտրոն Բերձոր քաղաքում, ցուցաբերելով շախմատի բնագավառում կայուն գիտելիքներ, խաղային որոշակի հմտություններ, բարոյակամային բարձր հատկանիշներ, կարողացավ հաղթանակ տանել իր բոլոր զորեղ ախոյանների նկատմամբ և մինչև 18 տարեկանների խմբում գրավեց պատվավոր առաջին տեղը:



*Մենուա Հակոբյանը գործադիր տնօրենի աշխատասենյակում*

Այդ առթիվ ոսկե մեդալի հետ միասին նա պարգևատրվեց նաև ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի պատվոգրով, ուր գրված է.

«Պարգևատրվում է Մենուա Հակոբյանը «Գյումրի OPEN» շախմատի միջազգային մրցաշարում մինչև 18 տարեկանների խմբում 1-ին տեղը գրավելու համար:

Գյումրի համայնքի ղեկավար՝

(ստորագրություն, կնիք) Վ. ՄԱՆԱՄՅԱՆ

16. 08. 2022 թ. »:

Քաշաթաղի շրջանը և նրա վարչական կենտրոն Բերձորը ազատագրումից ի վեր եղել են «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» մշտական հոգածության կենտրոնում, և բնական էր Մենուա Հակոբյանի այցելությունը հիմնադրամի գործադիր տնօրենին՝ «Գուրգեն պապիկին», ինչպես սիրում են նրան կոչել արցախցի երեխաները: Ջերմորեն շնորհավորելով բերձորցի պատանի շախմատիստի փայլուն հաղթանակը՝ հիմնադրամի գործադիր տնօրենը բնութագրական խոսքերով արժևորեց Մենուայի հաջողությունը, ամուր կամքն ու նպատակասլացությունը՝ նույնը մտղթելով բոլոր հայորդիներին ու մանավանդ արցախցիներին:



*Մենուա Հակոբյանի ստացած պատվոգիրը*

Միջազգային մրցաշարում հաղթած պատանի հայ շախմատիստին գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանն արժանացրեց դրամական պարգևի, որը տրամադրել էր հիմնադրամի ամերիկաբնակ հավատարիմ ու մշտական բարեկամ, պարտաճանաչ բարեգործ Սերոժ Մեսրոպյանը:

Մարդը գեղեցիկ է իր վարքագծով ու արարքներով, իսկ Սերոժ Մեսրոպյանն արտաքինից առավել գեղեցիկ ու հարուստ է իր ներաշխարհով: Գաղտնիք չէ, որ նա օժտված գեղանկարիչ է՝ լայն առումով արվեստագետ, կյանքի գեղեցիկն ու արվեստի խորքը համադրող ու այդպիսով կյանքը գեղեցկացնող, ուստի հասկանալի են նրա՝ որպես մեր հիմնադրամի նվիրյալ բարերարի, զոհաբերությունների, ազգանվեր գործունեության իմաստն ու խորհուրդը:

Փառք ու օրհնանք Սերոժ Մեսրոպյանին ու նրա նման նվիրյալ բարերարներին:

---

---

## Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ր Ե Ր

### *Հիմնադրամի շնորհակալությունը բարերարին*

Մեր դժվարին ժամանակներում, երբ տարածքների ու բնակավայրերի ծանրագույն կորուստներն ուղեկցվում են նաև տեղահանվածների ու վերաբնակների և անտունների նորանոր հոսքերով, որոնք ստվարացնում են կարիքավորների շարքերը, առաջացած նոր խնդիրներն անկարելի է լուծել առանց մեր հավատարիմ բարերարների անսակարկ աջակցության: Միշտ իր բարձրության վրա է եղել նաև «ԱՎԵՐՍ» ՓԲ ընկերությունը:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» տնօրինությունը և հոգաբարձության խորհուրդը շնորհակալություն են հայտնում «ԱՎԵՐՍ» ՓԲԸ-ի տնօրեն

### **ԿԱՐՈ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ՝**

հիմնադրամին բազմիցս օժանդակելու համար:

Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի անունից՝ գործադիր տնօրեն՝

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

***Ստորև ներկայացվում են «Արփեն» մայր և նորածին կենտրոնին» ուղղված երախտիքի խոսքերը՝ արձանագրված կենտրոնի մատյանում:***

ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախի Արմեն Ավագյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրինությունը շնորհակալություն է հայտնում «Արփեն» կենտրոնին դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին ցույց տված օգնության համար:

Մանկավարժական կոլեկտիվը իր առանձնակի շնորհակալությունն է հայտնում կենտրոնին և վստահեցնում, որ ցուցաբերած օգնությունն ավելի է պարտավորեցնում լավ աշխատելու, այս հողին արժանի սերունդ դաստիարակելու:

Գ. Ա. ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ  
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ (ստորագրություն)

\* \* \*

Քանի՛ տարի շարունակ «Արփեն» կենտրոնը օգնություն է ցուցաբերում հղի կանանց:

Բոլոր օգտվողների կողմից շնորհակալություն են հայտնում կենտրոնին այդ մեծ գործի համար:

Թող ձեր գործը ծի, ծաղկի, և ավելի շատանա ծննդաբերությունը Արցախում:

Ստորագրություն՝ Մարիաննա

\* \* \*

Ես՝ Սահականուշ Մնացականյանս, այցելելով «Արփեն» կենտրոն, ուղղակի հիացա նրանց մարդամտ վերաբերմունքից: Կցանկանայի, որ Արցախում գործեն նման շատ կենտրոններ, որպեսզի օգնեն հղի կանանց, և որ մեր հայ ազգը շատանա:

Շնորհակալություն ձեզ, բարի մարդիկ, այն ամենի համար, որ կատարում եք: Ձեզ ցանկանում են անապի երջանկություն և այնքան բարիք, ինչքան ծովը ունի ալիք:

Գրվեց գոհվածի այրու կողմից՝ հանուն իմ որբ մեծացած զավակների:

Ստորագրություն՝

Սահականուշ, գ. Ավետարանց

---

---

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍՈՒՐԱԴՅԱՆ Ս. Պ., ք. գ. դ., պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱՎԱԶՄ՝

ԱՎԱԳՅԱՆ Ա., ք. գ. դ., պրոֆեսոր  
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., ք. գ. թ., պրոֆեսոր  
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ. գ. թ., պրոֆեսոր

Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Սուրադյանի:  
Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:  
Հասցեն՝ Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սեն.: Հեռ.՝ 060 710 617, 055 –52– 29–36, 55 – 25 – 37, 52– 29–36: